ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

«ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

(Հայտերի գնահատման արդյունքների հաստատման)

ք. Երևան 24.12.2018թ.

ժամը՝ 10.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սարգսյան
Անդամներ՝ Հ. Ամիրյան
Ս. Դեմիրճյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գագինյան

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստը տեղի ունեցավ 24.12.2018թ., ժամը 10:00-ին, ք. Երևան, Աբովյան 9 հասցեում (ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության վարչական շենք, 1-ին հարկ թիվ 6 սենյակ):

«ՖՈՏՈՆ» ՍՊԸ, «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով), «Դեագա» ՍՊԸ, «ԵՎԱ ԵՎ ՍՅՈՒԶԻ» ՍՊԸ, «Գալիմա» ՍՊԸ, «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ, «Սասնա Ճրագ» ՍՊԸ և «Ցիկլոիդ» ՍՊԸ վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ աշխատակցի կողմից 17.12.2018թ. տրվել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության մասին եզրակացություն:

Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասով Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ աշխատակցի կողմից տրված 17.12.2018թ եզրակացության, հայտ ներկայացնելու օրվա դրությամբ «Գալիմա» ՍՊԸ ունի 1000 դրամ հարկային պարտավորություն բյուջեի նկատմամբ: Այն չի գերազանցում «Գալիմա» ՍՊԸ-ի գնային առաջարկի մեկ տոկոսը: Այս հիմքով «Գալիմա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասով Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ աշխատակցի կողմից տրված 17.12.2018թ եզրակացության, հայտ ներկայացնելու օրվա դրությամբ «Ցիկլոիդ» ՍՊԸ ունի 5000 դրամ հարկային պարտավորություն բյուջեի նկատմամբ: Ըստ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի ներկայացրած լրացուցիչ տեղեկատվության՝ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 2 բաժնի 21.12.2018թ. N 2082 տեղեկանքի՝ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ /29.11.2018թ./ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը հաստատվել է, այն Դրոշմանիշային վճարի գծով է, և համաձայն «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հարկ վճարողի անձնական հաշվի քաղվածքի՝ 29.11.2018թ. դրությամբ Դրոշմանիշային վճարը չի արտացոլված և մասնակցին չէր կարող հայտնի լինել: Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասով «Ցիկլոիդ» ՍՊԸ հայտը գնահատվել է անբավարար և այն մերժվել է:

Սահմանված ժամկետում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացվել են առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը):

18.12.2018թ. հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը), գնահատման թերթիկների երկուական օրինակ և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը:

«ԵՎԱ ԵՎ ՍՅՈՒԶԻ» ՍՊԸ, «Դեագա» ՍՊԸ, «Գալիմա» ՍՊԸ ներկայացրած փաստաթղթերում՝ հրավերով և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը (ապրանքների ամբողջական նկարագիրը) գնահատվել է բավարար:

«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի, «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի, «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով), «Սասնա Ճրագ» ՍՊԸ, «Ցիկլոիդ» ՍՊԸ ներկայացրած փաստաթղթերում՝ հրավերով և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի (ապրանքների ամբողջական նկարագրի) անհամապատասխանություններ է արձանագրվել:

Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները:

Հաշվի առնելով, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասով «Ցիկլոիդ» ՍՊԸ հայտը գնահատվել է անբավարար և այն մերժվել է, թիվ 40 չափաբաժնով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի (ապրանքների ամբողջական նկարագրի) ներկայացման պահանջ է ներկայացվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ին և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ-ին (կոնսորցիումով): Սահմանված ժամկետում ներկայացվել է ապրանքի լիարժեք նկարագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները, «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 7.19, 7.20, 7.22 կետերը, գնահատման թերթիկները՝ Հանձնաժողովը 3 կողմ, 0 դեմ ձայնով, ***միաձայն որոշեց՝***

Ա. Ընտրված մասնակից ճանաչել՝

- «Գալիմա» ՍՊԸ-ին NN 2, 24, 32 չափաբաժիններով
- «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին NN 3, 11, 13, 18, 22 չափաբաժիններով
- «Սասնա Ճրագ» ՍՊԸ-ին NN 29, 60 չափաբաժիններով
- «Դեագա» ՍՊԸ-ին NN 17, 20, 21, 49, 51, 55, 56 չափաբաժիններով

- «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ին և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ-ին կոնսորցիումով NN 4, 5, 6, 7, 8, 10, 12, 15, 16, 23, 25, 26, 27, 28, 30, 31, 38, 40, 44, 46, 47, 48, 57, 58, 59, 61 չափաբաժիններով
- «ԵՎԱ ԵՎ ՍՅՈՒԶԻ» ՍՊԸ-ին N 19 չափաբաժնով
- «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին NN 1, 9, 14, 34, 35, 36, 37, 39, 42, 45, 50, 52 չափաբաժիններով

Բ. **Հաստատել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության** տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հրապարակել:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ *Սամվել Սարգսյան*

Անդամներ՝ _____ *Համլետ Ամիրյան*

_____ *Սուսաննա Դեմիրճյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ *Սահակ Գագինյան*